ԹԻՒ ԺԲ· — ՇՐՋԱՆ ԻԳ· 1891 ՏԱՐԻ ԻԴ· ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ·

Իբրեւ զորդիս հնազանդութեան·

(Ա· Պետր· ա· 14)·

Մի քանի օր առաջ լսեցինք՝ որ մեր զօրքերի մէջ Մեքսիքոյում անսովոր կատաղութեամբ կոտորած է անում դեղին տենդը։ Հէնց որ այս լուրը հասաւ Ֆրանսիա ամբողջ խումբ ողորմածութեան քոյրերի ճանապարհ ընկաւ հիւանդ զինուորներին խնամելու համար։ Այս կատարուեցաւ շատ պարզ կերպով՝ առանց աղմկի՝ առանց մեծ եռանդի՝ բայց և առանց տատանման։ Այս բացառիկ դէպք չէ՝ անհնարին է չը զարմանալ՝ թէ ինչպէս կաթոլիկ եկեղե-

ցանկանութիւնը գիտէ որոնել ու գտնել Ֆրանսիայում անձնուէր անձինք, որոնք պատրաստ են երթալու ամենահեռաւոր երկիրներ և կատարելու այնտեղ ամենավտանգաւոր յանձնարարութիւնք։ Հարկաւո՞ր է արդեօք խնամել զզուելի և տարափոխիկ ախտերով վարակուածներին, թէև սորա համար հարկ էր իւր երիտասարդութիւնը թաղել հիւանդանոցների մռայլ կամարների ներքոյ, կաթոլիկ եկեղեցականութիւնը պարտաւորվում է միայն ընտրութիւն անելու բազմաթիւ անձանց մէջ, որոնք ցանկանում են այդ ծանր պարտականութիւնը ստանձնել. հարկաւո՞ր է արդեօք Չինաստան, Ճապոն, Սիամ երթալ Խալելեալին քարոզելու, հարիւրաւոր քարոզիչներ հանդէս են գալիս։

Եւ ահա եթէ հարցնես կաթոլիկին, թէ ուստի է այդ կարգապահութեան ոգին մինչև իսկ եռանդի մէջ, նա առանց տատանման քեզ կը պատասխանէ, թէ դորա պատճառը հնազանդութեան խոստումն է։ Եղբա՛ր, ես կարող էի հետախուզել այդպիսի անձնուիրութեան ներքին պատճառներն ու բարոյական կշիռը, բայց ներկայ դէպքում ես աւելի լաւ եմ համարում ձեր ուշադրութիւնը ձեր իսկ վերայ դարձնել ու հարցնել. դուք որ կոչուած էք աղատութեան, գիտէ՞ք արդեօք հնազանդել։ Արդեօք ամո՞ւր էք պահպանում դուք եթէ ոչ մարդկանց՝ գէթ Աստուծոյ առաջ արած ձեր ուխտը։

Պետրոս առաքեալը վերոյիշեալ բնաբանի մէջ քրիստոնէի կեանքի ղեկավար կանոն համարում է հնազանդութիւնն և որոշում է այն հասարակ և շատ պարզ գաղափարով, այն է մանկանց հնազանդութեամբ։ Հետազոտենք ուրեմն այդ երկու մտքերը, նախ պատճառներն, որոնք տրամադրում են մեզ հնազանդել և ապա այն յատկութիւններն, որոնք պիտի ունենայ քրիստոնէական հնազանդութիւնն և ի վերջոյ կը խօսենք նորա մասին, թէ ինչ ազդեցութիւն է գործում նա կեանքի վերայ։

Ինչո՞ւ պէտք է մենք հնազանդենք։ Նախ և առաջ այն պատճառով, որ հնազանդութիւնն Աստուծոյ դրած ընդհանուր օրէնք է, որոյ ազդեցութիւնից ազատ չէ ոչ մի արարած։ Բանականութիւնս ինձ ասում է, որ ամեն ստեղծած և կախումն ունեցող արարած

պէտք է ծառայէ իւր Արարչին և յիրաւի փորձը ցոյց է տալիս, որ աշխարհումն չը կայ ինչ, որ հնազանդութեան նպատակներից դուրս լինէր։ Որոնեցէք և գտէք մի չը հնազանդող արարած։ Նիւթի շրջանում գուք չէք գտնիլ ոչ մի հիւլէ, որ ամեն րոպէ անկախ լինէր որ և է ընդհանուր օրէնքից, և եթէ այս այլապէս լինէր, աշխարհս քաւոսի կը նմանէր։ Նոյնը տեսնում ենք և մարդկային հասարակութեան մէջ, որ կարող է գոյութիւն ունենալ միայն ի շնորհս այն հանգամանքի, որ նորա անդամներն ենթարկուում են այս կամ այն մասնաւոր պարտականութեանց, որոց նպատակն է ամբողջի ներդաշնակութիւնը։ Բոլոր հետեալ բազմազան գաղափարներն՝ զօրութիւն, անհրաժեշտութիւն, բնազդում, շահ, քաղաքական օրէնք, պատիւ, բարոյական օրէնք—սրքա բոլորը շարժիչներ են (ինչո՞ւ չասենք իշխողներ), որոնց իւրաքանչիւրը մեզնից այսպէս կամ այնպէս հնազանդում է։ Հասարակական սանդուղի ստորին աստիճաններում հնազանդութիւնը պահանջուում է—մի՞թէ հարկ է այս ապացուցանել—նա անհրաժեշտ է նորա և բարձր աստիճաններում։ Մարդս որքան աւելի բարձրանում է, այնքան աւելի մեծ պարտականութիւն է ստանձնում; բայց ի՞նչ կը նշանակէ պատասխանատու լինել, եթէ ոչ հնազանդել։

Հնազանդութեան օրէնքը աստուածային օրէնք է և ոչ մի բան չէ կարող նրանից փախուստ տալ։ Ահա զորօրինակ այն մարդն, որ ձգտում է դէպի ազատ զուարճութիւնք։ Պարտականութիւնը ծանր է նորա համար, մէկին ենթարկուելու գաղափարը նրան անտանելի է, անկախութեան ցանկութեամբ սրբած նա ուղում է շեղուիլ սովորական ճանապարհից, ինքն իւր տէրը դառնալ, կատարել միայն և եթ իւր կամքը։ Նա իրան ազատ է երևակայում; մինչդեռ նա գուցէ ստրուկն է այն հասարակական կարգի, որ նա արհամարհում է, գուցէ հէնց նա նորա համար է գրգռում այդ հասարակական կարգիքն, որ սա խօսէ նորա վերայ։ Բայց ընդունենք, որ նա ազատ է այդ լծից և հեռանենք ճանապարհին այդ մարդու, որ իրան ամեն պարտականութիւնից ազատ է համարում և բարձրաձայն խօսում է իւր անկախութեան մասին։ Աւա՜ղ, նա հազիւ մի քանի քայլ կանէ կեանքի ճանապարհի վերայ և ահա

նրան կը հանդիպի մի կիրք, որ նրան կասէ. «եկ իմ ետևիցս» և նա կերթայ. «երկրպագիր ինձ»—և նա կերկրպագէ. «ստորացիր»—և նա կստորանայ։ Եւ երբ միայն այդ կիրքը կը տանէ նրան այնտեղ, ուր նա երբէք չէր կամենում երթալ, երբ նա կը ջախջախէ նորա հաստատամտութիւնն ու կը բեկանէ նորա կամքը—միայն այն ժամանակ նա կը հասկանայ, որ ինքը ստրուկ է, որ նա կամաւոր հնազանդութիւնը պարտականութեանց փոխել է ստրկական հնազանդութեան հեզ կրքին, որ նրան ստորութեան է հասցրել։

Այս ամենն այսպէս է լինում, որովհետև անհնարին է փախչել աստուածային օրէնքներից, որոնք վաղ թէ ուշ վրէժխնդիր կը լինեն նրանց մոռացողներից։

Այսպէս Աստուած, որ մեզ ստեղծեց, հրամայեց մեզ հնազանդել, անմիջապէս դէպի Նա պէտք է ուղղած լինէր ամենակերպ հնազանդութիւն—և այն ժամանակ ամենուրեք ներդաշնակութիւն կը թագաւորէր։ Մարդս, մեղանչելով, խանգարեց այս ներդաշնակութիւնն, նա հեռացաւ Աստուածանից, բայց և այնպէս չազատուեցաւ հնազանդելու անհրաժեշտութիւնից։ Նա միայն իւր Տիրոջ փոխեց։ Ոմանք, անբան կենդանեաց նման, հնազանդում են միայն անհրաժեշտութեան կամ բնազդումին, ցուրտը կամ սոին ասում է նրանց՝ «աշխատիր» և նոքա աշխատում են. զօրութիւնը ասում է նրանց «ենթարկուիր» և նոքա հնազանդում են։ Այլք, աւելի զարգացածները հնազանդում են հասարակական կարծքին, նոքա կատարում են այս կամ այն գործողութիւնն, որովհետև մարդիկ հարկաւոր են համարում, որ այն կատարուի։ Այսպիսի պաշտօնը կամ սպասը, որ իւր ձևով մի ատելի բան է, աւելի բարձր աստիճաններում արդէն պատուոյ փառաւոր սպաս է համարում։ Երրորդներն, որոնք աւելի բարձր են կանգնած, հնազանդում են պարտականութեան գաղափարին։ Բայց իսկական պարտականութիւն առանց Աստուծոյ աներևակայելի է, որ այն դնում է մարդուս վերայ, պարտականութիւնն առանց Աստուծոյ պղնձեայ կուռք է կաւէ ոտներով։ Վերջապէս բարոյականութեան շրջանում ամենից բարձր կանգնած են ողորմածութեան հնազանդուողներն. ինչ կը լինէր

ողորմածութիւնն եթէ նա չաղբերանար սիրոյ Աստուածանից։ Միայն Քրիստոնեան հնազանդումէ Նրան։ Ո՞վ է ճշմարտութիւն, արդարութիւն և սէր։ Այս ձեր առաւելութիւնն է, եղբայրք։ Դուք այլ ևս չէք ծառայում կրքերին, կռոց կամ անկենդան ցնորքներին. դուք ուղղակի Աստուծուն էք ծառայում, կարող եմ ասել, որ դուք միայն հասնումէք ձեր գոյութեան ճշմարիտ նպատակին, ըստ որում համապատասխանումէք Ստեղծողի դիտաւորութեանց, որ ձեզ դրել է աշխարհում։ Աստուած կամեցաւ նիւթական արարածները պահել։ Բաւական արարածներ հնազանդումէին Նրան ակամայ, հարկաւոր էր արարած, որ ազատութեամբ պատասխանէր Նորա սիրոյն, ազատութեամբ կատարէր Նորա կամքը։ Եւ ահա քրիստոնէի մեծութիւնն այն է, որ սա համապատասխանումէ այս նշանակութեան, որովհետև քրիստոնէի հոգին և՛ միլիոնաւոր աշխարհներից աւելի նշանաւոր է։ Աստուած ցրուումէ նրանց երկնքի անսահման տարածութեան վերայ որպէս փոշի և նոքա ակամայ հնազանդումեն անպայման օրէնքներին, իսկ քրիստոնէի հոգին կամայ հնազանդումէ Աստուծոյ, որին սիրումէ։ Այսպէս յիշեցնելով ձեզ, թէ դուք ստեղծուած էք հնազանդելու համար, յիշեցնումեմ ձեզ ձեր կոչման բոլոր մեծութիւնն ու փառքը։ Ո՛հ, որքան ցանկալի էր ինձ ներշնչել այս գաղափարն իմ ունկնդիրներից ամենահեղ և խոնարհ քրիստոնէի հոգու մէջ։ Ինչպէս կը ցանկայի նրան հասկացնել, որ նա, կատարելով իւր կենսական խնդիրը, որքան էլ սա նրան աննշան և խղճուկ երևէր, հետամուտ է լինում կեանքի գաղափարական նպատակին։ Եղբայր, արարչագործութեան ընդարձակ միութեան մէջ, որ կազմում է Նախայաւիտենականի ապարանքը, դու գուցէ ամենաաննշան և աննկատելի տեղն ունիս, այնպէս որ երբեմն մինչև անգամ մոռացումես, թէ «արդեօք ճանաչումէ քեզ Տէրը»։ Այո՛, եղբայր, Նա քեզ աւելի լաւ է ճանաչում քան աշխարհիս մեծամեծներին, որոնք լցնումեն աշխարհս իրանց փառքի աղմուկով, միայն սնոտեաց համար աշխատելով, որովհետև նոցա բոլոր ջանքերը Տիրոջ համար չեն։ Նա ճանաչումէ քեզ. Նա սիրումէ քեզ, Նա ջատագովումէ և պաշտպանում քո պատերազմդ, քո ջանքերդ ու քո զոհաբերութիւնդ։ Դու երջանիկ ես,

որովհետև մի կողմ թողած աշխարհս և աշխարհի մեծամեծներուն, հնազանդումես իշխողների Տիրոջ։

Ձեր հնազանդութեան պատճառը միայն այս չը պէտք է լինի, եղբարք։ Դուք քրիստոնեայք էք, բայց ի՞նչ է քրիստոնեան, եթէ ոչ Քրիստոսի արեամբ փրկուած մարդ։ Այս «փրկուած» խօսքը հասկացէք նորա պարզ, վայելուչ և սրտաշարժ նշանակութեամբ։ Տէրը փրկեց ձեզ։ Դուք մեղաւոր էիք, դատապարտուած և Աստուծուց հեռացած, բայց դուք հաւատում էք, որ ձեզ համար, ձեզ այդ սարսափելի վիճակից ազատելու համար, տասն և ութ դար առաջ կատարուեցաւ անօրինակ սիրոյ և անձնուիրութեան սխրագործութիւնը։ Դուք հաւատում էք, որ Ամենաբարձրեալի Որդին մարդացաւ։ Նա ճաշակեց մարդկութեան ամեն թուլութիւններն ու վիշտերը մինչև ի դատապարտութիւն և բաժանումն Հօրից։ Դուք հաւատում էք, որ դուք էիք այդ զոհի առարկայն, որ Քրիստոսի արիւնը թափուեցաւ ձեզ սրբելու համար։ Այսպէս, դուք, փրկուած գոլով Յիսուս Քրիստոսով, այլ ևս ձեզ չէք պատկանում։ Դուք սեպհականութիւն էք Աստուծոյ այն ուխտի զօրութեամբ, որ Նախայաւիտենականի Որդին ստորագրել է իւր արիւնով։ Թող խաչի պատուանդանի մօտով անցնեն դէպի իրանց կորուստը նոքա, որք ցանկանում են նորա վերայ կարդալ «Ռաբ-Ռի-ն» խօսքը, չը կամենալով այնտեղ տեսնել «Հնազանդո-Ռի-ն» բառը։ Իսկ ով մերձենում է խաչին խանդաղատած հոգւով կարդում է նորա վերայ օրէնք, որ աւելի սուրբ է, հոգևոր և անջնջելի քան Սինայի տախտակների վերայ Յաւիտենականի ձեռքով դրոշմած օրէնքը։ Ամբողջ Աւետարանը պատուիրում է հնազանդութիւն։ Հնազանդիր, ասում է մեզ խիղճը, հնազանդիր, կրկնում է մեզ մարմնացեալ, չարչարեալ և հնազանդութիւն ուսուցանող Որդու Աստուծոյ անսովոր տեսարանը. հնազանդիր, ասում է մեզ սուրբ Զոհն, որ մեզ համար հեծեց և տանջուեցաւ խաչի վերայ, հնազանդիր, ասում է մեզ արիւնն, որ հոսում է նորա անմեղ ճակատի վերայ։ Հնազանդիր։ Եղբարք, դուք խաչի պատուանդանի մօտ ի՞նչ սովորեցաք, եթէ ոչ հնազանդութիւն։ Ի՞նչ է այն հաւատն, եթէ սա լոկ խօսքեր են։ Սարսափելի՜ գաղափար։ Աւետարանն ասում է. «Հաւատա՛ և կը փրկուիս. կարելի է հաւատալ և կորնչիլ։

Այսպէս ուրեմն մենք պէտք է հնազանդենք. բայց ի՞նչպէս։

Երեք և միայն երեք եղանակ կայ հնազանդութեան. հնազանդութիւն շահից, հնազանդութիւն երկիւղից և հնազանդութիւն սէրից. կայ հնազանդութիւն վարձկանի, ստրկի և մանկան։ Դուք գիտէք, թէ ս. Պետրոս առաքեալն որպիսի հնազանդութիւն է պահանջում մեզնից, բայց ինձ հարկ է խօսել և՛ հնազանդութեան առաջին երկու եղանակների վերայ, որովհետև վարձկաններ ու ստրուկներ ամենուրեք գտանուում են և ո՞վ է երաշխաւոր, որ հէնց այստեղ տաճարի մէջ էլ չը կան։

Զը նայելով այն սարսափելի հակադրութեան, որ կայ շահագիտութեան և Աւետարանի ոգիների մէջ, յաճախ քրիստոնէական հնազանդութիւնը խառնում էին վարձկանի հնազանդութեան հետ, որ ծառայում է Աստուծոյ, վարձ ստանալու յուսով։ Ահա զորօրինակ դուք մատնացոյց էք լինում ինձ մի մարդու վերայ, որոյ կեանքն իւր արտաքին խստութեամբ ձեզ զարմացնում է։ Դուք ակամայ աղաղակում էք. «կեանքի որպիսի սրբութիւն է»։ Բայց աւելի մօտենալով նրան և նորա ներսը թափանցելով նկատում էք, որ նորա հոգու մէջ իսկական սիրոյ նշոյլ իսկ չը կայ։ Հարցնում եմ. արժանի՞ է արդեօք այդպիսի մարդն երկնային արքայութեան։ Ո՛չ, ո՛չ, երկինքը չէ գնուում ոչ դրամով և ոչ հաշուով սպասարկութեամբ. երկինքը սիրող սրտերի մասն և բաժին է։ Ի՞նչ նշանակութիւն ունին ամենանուոիր գործողութիւնք, ամենախիստ ճգնութիւնն, մինչև անգամ իւր ամբողջ կայքը աղքատներին բաժանելն և իւր անձը կրակի մատնելն, եթէ սրտումն սէր չունի։ Ոչ մենք համարձակապէս կարող ենք ասել, որ երկնից արքայութիւնը վարձկաններինը չէ, Աստուած չէ ցանկանում հնազանդութիւն, որոյ գաղտնի նպատակը շահախնդրութիւն է։ Միայն փրկութիւն ձեռք բերելու դիտմամբ ցոյց տուած հնազանդութիւնը իրան կորցնելու ամենահաստատուն միջոցն է, որովհետև այդ կը նշանակէ իւր եսասիրութիւնը մինչև Աստուծոյ գիրկը հասցնել։

Եղբա՛յր, դու կարծում ես, թէ ազատ ես այդպիսի փորձութիւնից, գնուած Յիսուս Քրիստոսից դու սպասում ես փրկութիւնդ

Աստուծոյ ողորմութիւնից և ոչ միայն քո բարի գործքերիդ շնորհիւ. երբէք քո մտքովդ էլ չէր անցնում գնել երկինքը և քո զարմանքդ մեծ կը լինէր, եթէ մէկը քեզ ասէր, թէ քո սրտումդ էլ դեռ ևս կայ մնացորդ վարձկանի շահախնդրութեան։

Դժբաղդաբար ես տեսած եմ այլ մարդիկ էլ, որոնք քեզ նման դժգոհութիւն են յայտնել դոյնպիսի ենթադրութիւնների մասին, բայց ահա դժբաղդութեան ալիքները ծածկում են նրանց, փորձութիւնք մէկը միւսի ետևից հասնում են նրանց։ Եւ ի՞նչ երևեցաւ այդպիսի հանգամանքներում նոցա սրտերում, որոնք ըստ երևութին անձնատուր էին Աստուծոյ։ Ի՞նչ էին խօսում այն շրթունք, որոնք երբեմն եռանդով փառաբանում էին նորա սէրը։ Դեռ լաւ է, եթէ նոքա չեն արտայայտում պարզապէս վրդովմունք և դժգոհութիւն, այլ միայն դառն վիշտ, տրտունջ և ցաւ։ Ա յսպէս ես Դու մեզ վարձատրում։ Ա յսպէս ե՞ս Դու գնահատում մեր սէրն ու եռանդը, ահա իսկապէս այն խօսքերն, որոնք ասում են Աստուծոյ այդ բարկացած սրտերը։ Ի՞նչ է այս տրտնջանաց պատճառն, եթէ ոչ խաբուած շահախնդրութիւնը։ Նոքա սիրով կը ծառայէին Աստուծոյ, միայն երջանիկ կեանքի պայմանով, այնպէս ինչպէս հրէայք հետևում էին Յիսուսին, յագենալու համար։ Բայց ահա՛ բաղդն անհետանում է և նոքա դժգոհ են, խռովում են և չեն կարողանում ներել այդ Աստուծուն։ Ի՞նչպէս կարելի է անուանել այդ վարմունքը, եթէ ոչ վարձկանի հաշիւ։ Ծառայի այսպիսի շահախնդիր յոյսը ինչպէս անուանել, ծառայի, որ իւր պարտականութեան համար ամենից առաջ որոնում է վարձատրութիւն։ Ո՛հ, այդ հաշիւը թափանցում է շատ հաւատացեալների մէջ, նա մնում է մինչև անգամ այն մարդոց սրտերն, որոնք առանձին նշանակութիւն են տալիս շնորհաբաշխութեան, նա սողում է, իբրև օձ մարդկային սրտի ամենագաղտնի խորշերը. թող ամեն ոք զննէ իրան և ինքն իրան հարցնէ, թէ արդեօք ինքն այդ օձին չէ՞ տաքացրել իւր կրծքում։

Թէև քրիստոնեան հնազանդում է ոչ թէ նորա համար, որ ստանայ վարձ, բայց չը պէտք է կարծել, որ քրիստոնէական հնազանդութիւնն արժանի չէ վարձու, որովհետև Աւետարանն ասում

է այդ մասին այնպէս ուղիղ և պարզ կերպով, որ ոչ մի սարա-
կուսութիւն չէ կարող լինել։ Ես գիտեմ, որ կան շատ ջերմեռանդ
հոգեպաշտներ, որոնք սիրով կը համաձայնէին անպայման կերպով
բաժանել երջանկութեան գաղափարը առաքինութեան գաղափա-
ռից, որպէս զի վերջինն աւելի խիստ և մեծ երևի։ Բայց այդպէս չէ
խորհում Աստուած, որ գիտէ, թէ մենք ինչ ենք. Յիսուս Քրիստոս եր-
բէք չէ դրդում մեզ գէպի զոհ, առանց մատնացոյց լինելու միևնոյն
ժամանակ զոհի վարձատրութեան—պարգևի վերայ. և Նորա բոլոր
վարդապետութիւնն այս մասին կարելի է բնաւորել այն խօսքերով,
որով սկսում է Նորա երանութեան քարոզը սարի վերայ, թէ
երանի նրանց, որոնք լալիս են։

Կոծն ու լացը—այդ զոհն է, երջանկութիւնը—դա վարձատրու-
թիւնն է։ Այո՛, հաւատարմութեան Աստուածն ունի իւր վարձատրու-
թիւնն ամեն վշտերի համար և այն ոչ միայն մեծ նորոգման օրին
երկնքում, այլ և այս աշխարհիս երեսին էլ իւր ընտրեալներին նա
տալիս է Իւր սիրոյ նման խաղաղ և խորին ուրախութիւնք։ Եթէ
դուք, եղբարք, չունիք այդ ուրախութիւնքը, դա կը նշանակէ, որ
դուք բաւականաչափ հնազանդ չէք։ Գնացէք և հարցրեցէք այդ
մասին ոչ այն քրիստոնեաներին, որոց կեանքն երբէք փորձութեան
բովքի միջից չէ անցել, այլ նրանց հարցրեցէք, որոց երջանկութիւ-
նը հազար անգամ ջարդուփշուր է եղած, որոց կեանքը անխիղճ
ցաղդի խաղալիք է եղած։ Այս վերջինները աւելի շուտով կասեն
ձեզ, որ հնազանդութիւնը բերում է և վարձատրութիւն, որ Պօղոս
առաքելոյ խօսքերով—և՛ վշտի ժամանակ կարելի է առաւելու-
թեամբ վայելել ուրախութիւն։

Բայց եթէ Տէրը չէ ցանկանում որ Իրան վարձկանները ծառայեն,
աւելի ևս նա չի ցանկանալ ստրկի հնազանդութիւն։ Երկիւղից ծա-
գած հնազանդութիւնը, կրաւորական հնազանդութիւնն, առանց
ներշնչման և սիրոյ գին չունի Նորա առաջ։

Ստրկական հնազանդութիւն—՝ոչ, որքան հեշտ էր Աստուն
դրան ունենալ։ Բաւական էր, որ երկնքից որոտումն ու կայծակ
թափէր, անհնազանդներին հրաշից անյաղթ յայտնութեամբ հա-
բուածէր և նրանց սարսափով ճնշէր։ Այն ժամանակ ո՞վ կը հա-

մարձակէր նրան դիմադրել։ Կը գտնուէր արդեօք այն ժամանակ այնպիսի մի անմիտ արարած, որ բաց պատերազմ մտնէր Աստուածակարողի դէմ։ Որոյ մի խօսքը կարող է մարդուն յաւիտենական գժբաղդութեան անդունդը գլորել։ Այս եղանակով Աստուած կարող էր նուաճել ամեն ապստամբ կամք, բայց նա այս չարաւ, նա այդ չը ցանկացաւ։ Ի՞նչ է ցոյց տալիս բոլոր յայտնութիւնը եթէ ոչ Աստուծոյ հրաւէրն իւր արարածներին դէպի ազատակամ հնազանդութիւն։ Մի նախնի բանաստեղծ գեղեցիկ պատկերներով ասում է, որ փոթորիկներն, որոնք ովկիանոսի ալիքները լեռնացնում են, նպատակ ունին կազմակերպելու թանկագին մարգարիտն, որ ծովի յատակում զարգանում է։ Աւելի մեծ պատճառաբանութեամբ կարելի է ասել, որ նախախնամութեան բոլոր գիտաւորութեանց, ինչպէս նոքա մեզ երևում են Ս. Գրքում, նորա բոլոր ապառնալեաց, պատիժների և փորձութեանց նպատակն արարածի պատկն է, աստուածային սիրոյ յաղթանակը—ես կամենում եմ ասել—քրիստոնէի հոգին, որ իրան ազատութեամբ նուիրում է Աստուծոյ։ Իսկապէս բոլոր Աւետարանն, այդ զարմանալի խորհուրդը Աստուածորդու ստորութեան, խոնարհութեան և խաչելութեան ոչ այլ ինչ է, բայց եթէ հանդիսաւոր և յոյժ սրտառուչ հրաւէր դէպի մեր ազատութիւնը։ Մենք ամենքս խաչի վերայ տեսնում ենք այս խօսքերը. «Ահա՛ ես քեզ համար ինչ արի. իսկ դո՛ւ—դու ի՞նչ արիր ինձ համար»։ Աստենք ուրեմն առանց տատանման. խաչելութեան առաջ ստրկական հնազանդութիւնը միայն և եթէ ծաղր և ծանակ է։

Բայց ո՞վ չէ լսած, որ այսպիսի հնազանդութիւն է քարոզուում յանուն Աւետարանի։ Ո՞վ չը գիտէ, որ հնազանդութեան նախագաղափար համարում էին կրաւորական հպատակութիւնն, այսինքն այնպիսի վիճակ, երբ մարդս դառնում է անհոգի դի նոցա ձեռքում, որք կառավարում են նրան։ Ո՞վ չը գիտէ նոցա մեքենայական բարեպաշտութիւնն, որոյ նախընթացաբար որոշուած բոլոր ատիճանները պէտք է անցնէ քրիստոնեայն, որպիսի էլ լինի նորա հոգւոյ ներքին տրամադրութիւնը։ Այսպիսի մարդը սպասում է յաջողութիւն և կեանք միայն սրբազան արարողութիւնների արտաքին ազ-

գեղութիւնից, որբազան առարկաներին մերձենալից և ամեն ապաշխարանք ճշգութեամբ կատարելից։ Որպիսի հակադրութիւն. որպիսի որբապղծութիւն։ Ո՛չ, դորա մէջ չէ հնազանդութիւնն. ամենից առաջ Աստուած որոնում է Նրան սիրող սրտեր և Նորա Որդու արիւնը հոսեց ոչ նորա համար, որ ինքնաշարժ մեքենաներ կամ ստրուկներ ստեղծէ։

Շատերը մեծ գին են դնում այն հեռանքներին, որոնց հասնում է կոյր հնազանդութիւնը. շատերն ասում են, որ նա հրաշքներ է գործում։ Մենք համաձայն ենք—կոյր հնազանդութիւնը յիրաւի յաջողութեան ստրատելի գործիք է։ Նայեցէք, ինչ հեռանքների հասնում է նա պատերազմում, մի մարդու ակնարկով որոշեալ տեղում հարիւր հազարաւոր զինուորների ոյժը կենդրոնացնելով։ Բոլոր բռնաւորները հասկանում էին կոյր հնազանդութեան զօրութիւնն և աշխատում էին նրան աւելի ձեռք բերել, քան որ և է այլ բան։ Բայց և այնպէս ես կասեմ, որ ինձ համար զարհուրելի է, երբ մարդս գոռում է և աշխատում է ձեռք բերել Աստուծոյ չը ցանկացած այդպիսի կոյր հնազանդութիւնը, թէպուզ լինէր այդ լաւ դիտաւորութեամբ և բարի նպատակով։ Դուք մատնացոյց կը լինէք այն մեծ զօրութեան վերայ, որ տալիս է մի բարի գործի համար, կոյր հնազանդութիւնը—բայց մի՞թէ դուք չէք մոռացած, որ նա նոյն զօրութեամբ կարող է տանել դէպի չարը և այն առանց խղճի խայթի, որովհետև հնազանդողներից բոլոր պատասխանատուութիւնը ընկնում է հրամայողի վերայ։ Ահա մեր առաջն են ԺԶ-րդ դարի երկու անձնաւորութիւնք։ Մէկն, որ առաջուց նախապատրաստուած նահատակութեան համար գնում է ձախոն Խաչելեալին քարոզելու—դուք արդէն պատրաստ էք նրան իբրև դիւցազնի փառաբանելու, իսկ երկրորդը գնում է Հոլլանդիա Վելհելմոս Լուիկին (Օրանեան) սպանելու։ Ինչպէս չը սարսափի մարդս մոռածելով, որ այդ երկուսն էլ էապէս մի են. և՛ նահատակն և՛ մարդասպանն—երկուսն էլ միայն հնազանդում էին։

Եթէ մենք ընդունելու անգամ լինենք, որ կոյր և անկամք հնազանդութիւնը ծառայում է միայն բարի գործերին, այնու ամենայ-

նիւ նպատակի որբութիւնը պէտք չէ մեզ մոռացնէ, որքան մահաբեր և կորստաբեր բան կայ միջոցների մէջ և երբ ես տեսնում եմ թէ այդ սարսափելի գործիքը—հպատակութիւնը—իւր ճանապարհին խեղդում է ամեն ազատակամ բարի եռանդ՝ մարդկային հոգւոյ այս ճոխ ու ընտիր ծաղիկը—ես նրան դատապարտում եմ իբրև մահուան գործիք։ Ո՛չ, մինչև անգամ կրօնի ճշմարտութեան ծառայելու համար հարկ չէ խորտակել մարդուս հոգին և նրան այդպիսի կրաւորականութեան հասցնել։ Եթէ և այժմ մենք յաճախ տեսնում ենք, որ ակամայ հնազանդութիւնը հիմնուած կուսակրօնական ուխտի վերայ, կատարում է գործեր, որոնք արժանի են մեր յարգանաց և զարմանքին, դա այն պատճառով է, որ այդ հնազանդութիւնը հասարակաց կարծքի, լուսաւորութեան և ազատութեան ազդեցութեան ներքոյ չէ կարողանում շատ շեղուիլ այն ճանապարհից, որով գնալ պահանջում են բարին և ողորմածութիւնը։ Իսկ այդ ճանապարհի վերայ նրան օգնութիւն են հասնում հոգու կենդանի զօրութիւնք, այնպէս որ ընտրեալների մէջ այդ կոյր հնազանդութիւնը կրաւորականից փոխուում է կամաւոր *)։

Այսպէս, եղբարք, մենք պէտք է հեռացնենք մեզնից եռանդով և հնազանդութիւնն երկիւղից, ինչպէս դատապարտեցինք հնազանդութիւնն հաշուով։ Ինչպէս արդէն նկատեցի, Աստուած չէ կամենում, որ նրան ստրուկներ ու վարձկաններ ծառայեն։ Ուրեմն ո՞վ կը ծառայէ նրան։ Այս հարցին ս. Առաքեալը պատասխանում է. «Որդիք»։

«Որդիք»։ Այս պարզ խօսքը զարմանալի խորին միտք ունի։ Մեզ զբաղեցնող խնդրում նա ամեն ինչ իւր մէջ բովանդակում է՝ մեր անպայման կախումն Աստծուց, սուրբ յարգանքն և քնքոյշ սէրը։ Նա մեզ յիշեցնում է ամեն ինչ, որ պարտաւորում է մեզ հնազանդել և հեռացնում է ամեն հաշիւ ու ստրկական հպատակութիւն, որոնք կարող էին խառնուիլ մեր հնազանդութեան հետ։ Որդիք Աստուծոյ—երբեմն մենք կորցրինք այս մեր ընտիր և փառաւոր

*) Այստեղ արած բոլոր ակնարկութիւնք անպայման հնազանդութեան վնասակարութեան մասին վերաբերում են կաթոլիկ կրօնաւորներին։

սիրողը։ Եթէ մենք կրկին ստացանք այդ սիրողի արտօնութիւնը-դա աստուածային շնորհք է։ Նրան մեզ վերադարձնել կարող էր միայն Յիսուս Քրիստոս. միայն Նորա մեծ զոհը կարող էր վերադարձնել մեզ այդ անունը։ Այսպէս այդ խօսքը յիշեցնում է մեզ ամեն ինչ, որ նշանաւորն է Աւետարանում և սրտաշարժը։ Ես չեմ ասել ձեզ, եղբայրք, որքան քնքուշութիւն և սրբութիւն պէտք է լինի որդոց յարաբերութեանց մէջ առ Հայրը. ժամանակը սահպում է ինձ շտապել կատարելու այլ պարտականութիւնք և ես շտապում եմ ձեզ ասելու. Դուք, որ Աստուծուն Հայր էք անուանում և մերժել էք վարձականի հաշիւն և սարկի երկիւղը—դուք, որդիքդ Աստուծոյ, գիտէք արդեօք հնազանդել։

Բայց շարունակելից առաջ, ես ինքս ինձ հարց եմ տալիս, թէ արդեօ՞ք մենք կատարելապէս հասկացել ենք այդ խօսքի բոլոր միտքը։ Այդ խօսքով մենք մի գործողութիւն ենք հասկանում։ բայց գործողութիւն—դա հնազանդութեան մի կողմն է, համբերութիւնը նորա միւս կողմն է, որ ամենից նշանաւորն է շատերի համար և ամենադժուարն ամենքի համար։

Մենք հեշտ ենք հաւատում, թէ մեր գործողութիւններով ծառայում ենք Աստուծոյ—շրջել, խօսել, աշխատել—ահա մեր միջոցները հնազանդութեան։ Բայց սպասել, անգործունեայ մնալ և համբերել—սոքա մեզ մահուանից աւելի ծանր են թուում։ Որպիսի կոպիտ սխալ է մեր մարմնաւոր խելքի, որ գնահատում է միայն այն, ինչ որ տեսանելի է և կշռելի։ Կարծես ներքին գործունէութիւնն, որ կատարւում է մեր հոգու մէջ պակաս գին ունի, քան այն նիւթն, որ մեր ձեռքերը յարմարեցրել են գործածութեան համար, քան այն տարածութիւնն, որ անցել են մեր ոտները, քան այն բազմաթիւ խօսքերն, որ արտասանել են մեր շրթունքները։ Եղբայրք, հնազանդութիւնն Աստուծոյ նոյնքան էլ համբերութեան մէջ է, որքան և՝ գործունէութեան մէջ։ Ընդհանրական եկեղեցուն հիւանդներ նոյնքան հարկաւոր են, որքան և՝ քարոզիչները, նորա կամքը պարտաւորիչ է և՝ այն ժամանակ, երբ նա մեզ պատուիրում է լռել և՝ երբ հրամայում է խօսել և երբ նա մեզ մեխում է հիւանդութեան մահճի վերայ

և՝ երբ ուղարկում է պատերազմելու հեթանոսութեան դէմ։

Քրիստոնեայի կեանքը յաճախ Ս. Գրքում համեմատուում է սրբազան պատերազմի հետ — այս այսպէս կանոնաւոր պատերազմում բոլոր զօրքերը միևնոյն դերը չեն կատարում։ Եթէ մի քանի գնդերն ուղարկուում են ուղղակի թշնամիների դէմ և պատերազմի մէջ կարող են ցոյց տալ իրանց եռանդոտ քաջութիւնը, այլք ամբողջ ժամեր պարտաւորուած են լինում մնալու թշնամու հրազէնքի մահաբեր կրակի ներքոյ։ Նոքա զէնքը ձեռքին անշարժ կանգնած են, հնար չունենալով նրանց գործադրելու և նայում են ինչպէս թշնամու ռումբները նոցա շարքերում ակօս են բաց անում, իսկ երեկոյեան դադրած այս զարհուրելի կրակից, նոքա չեն ստանում յաղթանակի պսակ և ամբոխը նոցա անունները չի յիշել ի շարս նոցա անուանց, որոնց գովում է։

Բայց ո՞վ կը համարձակի ասելու թէ նոցա դերը պատերազմում դիւրին էր։ Ընդհակառակն այդպիսի դիրքի համար ընտրուում են աւելի դիմացկուն և կրթուած գնդերը, որովհետև նորակիրթ զինուորներից կարելի է սպասել աւելի եռանդ և անդիմադրելի գրոհ, որոնք անհրաժեշտ են թշնամուն տեղահան անելու համար, բայց միայն հինաւուրց զինուորները կարող են ցոյց տալ հաստատուն արիութիւն, որ արհամարհում է անյայտ մահը։ Կեանքի պատերազմումն էլ նոյնն է կատարուում։ Եթէ Տէրն ոմանց կանգնեցնում է առաջին շարքերում, կոչելով նրանց ի պատերազմ, որ արձագանք կը տայ պատմութեան մէջ, իսկ այլոց նա հրամայում է սպասել և համբերել լռութեան և ըստ երևութին անգործունէութեան մէջ, այնու ամենայնիւ թէ առաջինք և թէ երկրորդք միասին նպաստում են յաղթութեան և ամենքն էլ միապէս նպաստում են նախախնամութեան նպատակներին։

Այսպէս, եղբարք, դուք, որ կոչուած էք կատարելու այս կամ այն խնդիրը, գիտէք արդեօք հնազանդել։

Ես ուղղակի կասեմ այն, ինչ որ մտածում եմ։ Ներկայումս մենք ամեն առաքինութիւններից աւելի կարօտ ենք հնազանդութեան։ Ես հակամիտ չեմ անորոշ ենթադրութիւններ անելու, որով ճգնում են մեր ժամանակի վերայ բարդելու ամեն թուլու-

թիւնք և ախտեր, բայց եթէ նկատելի է ներկայ ժամանակ ա-հասարակ այս կամ այն յատկութեան նուազումն, դա աւելի պարտականութեանց գիտակցութեան զգացմունքներն են։ Արկական հնազանդութիւն, առաւելութեամբ ունինք, բայց ազատական հնազանդութիւն պարտականութեան, հնազանդութիւն Աստուծոյ կամքին—ահա ինչի ենք կարօտ։ Կարո՞ղ էր արդեօք այլապէս լինել մեր ժամանակում, երբ այսպէս անուանեալ լրջամիտ մարդիկ համարձակում են հաստատել, թէ Աստուծոյ գաղափարը մինչև այժմ խոչընդոտ է եղած մարդկութեան ազատ զարգացման։

Այսպիսի է ներկայ ժամանակի ուղղութիւնը։ Հանդէս բերեցէք այստեղ այն բնաւորութիւններից մէկին, որոնց համար ապաստամբութիւնն ունի ինչ որ գաղտնի ու գրաւիչ բան և երևակայեցէք, թէ որքան զօրեղ կը լինի նորա գայթակղութիւնը։ Այո՛, եղբարք, լինում են սարսափելի բոպէներ, երբ հպարտութեան ինքնիշխանութիւնը զարթում է մեր հոգու մէջ անսովոր զօրութեամբ։ Այն ժամանակ մեր ներքին ամբողջ աշխարհը, կարծես, դաւ է նիւթում Աստծուն գիմադրելու համար։ Երևակայութիւնն առանց ուղղութեան ասոանդուում է, հետևելով իւր հեռաւոր մեռալ ցնորքներին, կիրքը զարթում է, փայրի գազանի նման, որ պարէն է պահանջում, բանականութիւնն ուզում է ամեն ինչ զեկավարել, կամքը չէ կարողանում իւր անձնական պիտոյից սահմանից անցնել։ Ո՞ւմ անծանօթ է այսպիսի ժամանակի սարսափելի պատերազմը։ Հէնց այդ ժամանակ մեր հպարտութեան խորքից բարձրանում են առ Աստուած տրտունջները, որոց թարգման լինելու խօսքերով անկարող է մեր լեզուն, այդ ժամանակ մենք պատրաստ ենք ասելու Աստծուն. ինչո՞ւ Դու ինձ քրիստոնեայ ստեղծեցիր։ Ինչո՞ւ Դու իմ մէջս գրիր այս անհանգիստ խղճմտանքը, որ ինձ մի բոպէ հանգիստ չէ տալիս։ Ինչո՞ւ Դու իմ ճանապարհիս վերայ կանգնեցիր Դողգոթայի խաչն, որ ինձ յանդիմանում է, երբ ես գայթակղուում եմ։ Ինչո՞ւ այն ժամանակ, երբ այլք անհոգութեամբ և ուրախ իրանց սրտի ցանկութեանց, աչաց նախանձին և կենսական անափառութեան հետևելով անցնում են իրանց ճանապարհը, Դու ինձ այնպէս ստեղծեցիր, որ

ես պարզապէս հասկանում եմ՝ թէ ինչ է այդ զուարճութեանց էութիւնը և արդէն չեմ կարողանում մասնակցել նրանց առանց խղճի խայթի, այլ նոցա տուած բաւականութեան մէջ գտնում եմ նոցա ունայնութեան գիտակցութիւնը։

Այսպիսի մտքեր, եղբարք, խռովում են մեր հոգին, մտքեր որոնք միայն հայհոյութիւն են՝ թէ իմ Աստուած, ինչո՞ւ Դու մեզ փրկեցիր։

Դուք, որ գլորուել էք հպարտութեան այդ անդունդը, դուք, որ այդ ժամանակ զգում էք սարսափ բերող այնպիսի զուարճութիւն, որպիսին մարդս զգում է երբեմն գլխի պտտելիս, դուք, որոնք լսում էք ձեր մէջ այն ձայնը, որ կոչում է ձեզ դէպի ապրստամբութիւն երկիւղից ամեն տեսակ լծի դէմ—գնացէք Աւետարանի Աստուծոյ մօտ և հարցրեցէք նրան, թէ նա որպիսի հնազանդութիւն է գնում ձեր վերայ։

Բայց ո՞ւր կը գտնէք դուք նրան. նազարէթում՝ իբրև հնազանդ ծառայի, Գէթսեմանիի այգիում՝ իբրև աղաղակողի թէ «բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս Դու». Գողգոթայի վերայ, ուր խըմում է չարչարանաց դառն բաժակը մեզ ամենքիս համար։ Գնացէք նորա մօտ, ով հպարտ մեղաւորներ և յանդգնեցէք վիճելու նորա հետ ձեր իրաւանց համար։ Գանգատեցէք, որ դուք ստիպուած էք հնազանդել, որ դուք պարտաւորուած էք կրելու ձեր խաչն, մինչդեռ նա իւր խաչի վերայ բևեռած էր. գանգատեցէք, որ դուք պարտաւոր էք համբերել, մինչդեռ նա ցմահ համբերեց և իբրև վարձ այդ համբերութեան և հնազանդութեան համար պէտք է միայն աղաղակէր. «Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»։

Բայց բազմաթիւ չեն այն մարդիկ, որոնք աշկարայ կերպով ապստամբում են, քչերը համարձակում են դէմ յանդիման վիճաբանութեան մէջ մտնել Աստուծոյ հետ։ Ըստ մեծի մասին մենք շեղուում ենք նրանից այլապէս, այն է, մենք ըստ երևութին հպատակում ենք նորա Իշխանութեան, մենք խոստանում ենք ծառայել նրան, բայց այդ սպասարկութեան այս կամ այն եղանակը ինքներս ենք ընտրում։ Եկեղեցու մէջ կան շատ քրիստոնեայք, որոնք ցանկանում են ծառայել Աստուծոյ իրանց կամքի համեմատ

և որոնք իրանց ամենագլխաւոր պարտականութիւնքը ղոհ են բերում երևակայական պարտաւորութեանց—քրիստոնեայք, որոնք կատարում են իրանց կամքը Աստուծոյ կամքի անուան ներքոյ։ Նոքա յաճախ կամակորութեամբ հետևում են մի ծրագրի, որ ամուր կերպով կազմակերպուել է նոցա գլխում և այնուհետև առ ոչինչ են համարում թէ իրանց եղբարց նկատողութիւնքը, թէ հանգամանքների ցուցմունքը և թէ այն պարզ նշանները, որոնցմով Աստուած օգնում է մեր թուլութեան, և ապա արդարացնում են իրանց վարմունքը յանուն Աստուծոյ կամաց։ Աստուծոյ կամքը—յարմար խօսք է մեր բոլոր ցանկութիւններն արդարացնելու համար. բայց մի և նոյն ժամանակ նա ժպիտ է յարուցանում սկեպտիկեանների շրթանց վերայ։ Եղբարք, զգուշանանք սրբապղծելուց այդպիսի խօսքերը, չափաւորենք մեր լեզուն, զգուշանանք մեր սեպհական ցնորքն ու մեր խորամանկ սրտի ճարտարանքը աստուածային ներշնչութիւն համարելից, որովհետև մենք մեզ գայթակղելով ու խաբելով ինչ որ մեզ համար ամենաստուրքն է արդար ծաղրի ու ծանակի առարկայ ենք դարձնում։

Եւ յիրաւի ինչպէս ծաղրալի է այն քրիստոնեան, որ կրում է հնազանդութեան հանդերձ և արհամարհում է ամենապարզ ու ակնյայտնի բնական պարտականութիւնքը։ Այն ժամանակ իւր խղճի յանդիմանութիւնքը խեղդելու համար նա կրկնապատկում է իւր արտաքին եռանդը, նորա խանդն արտայայտուում է ազմիկալից բողոքներով և Յաւիտենականի անունն նորա շրթունքներն այնքան յաճախ կրկնում են, որքան նրանից հեռու է Աստուծոյ կամքը։ Սիրտս ճմլուում է, երբ մտածում եմ թէ որքան յաճախ պատահում են այսպիսի իրողութիւնք։ Աստուծոյ առաջ այսպիսի խորամանկութիւն գործ դնելու եղանակը չափազանց ցաւալի է։ Այդպէս է արդեօք ներգործում սէրը։ Սիրող սրտին մի՞թէ կարող է սիրելի լինել խաբէութիւնն, մի՞թէ նա կարող է խաբէութիւնն առաջարկել Աստծուն իբրև հաւատարմութիւն։ Եղբարք, ձեր խղճմտանքն Աստուծոյ ձայն է, ես չեմ կարծում որ նա այդպիսի դէպքերում լռելիս լինի։ Պէտք է նրան լսել։ Առանց սրան այլ ևս մի խօսէք հնազանդութեան մասին և զգուշացէք,

որ մի գուցէ նմանիք այն որդուն, որ ասաց իւր հօրը. «ես կերթամ քո այգին, և չը գնաց։ Զգուշացէք ուրեմն, որ մաքսաւորներն և կորած կանայք չը յառաջեն ձեզ երկնից արքայութեանում։

Ինձ մնում է մատնացոյց լինելու էլի մի գայթակղութեան վերայ, որ ես աւելի վտանգաւոր եմ համարում այն պատճառով, որ նա առաջ է գալիս ոչ մեր հպարտութիւնից և ոչ էլ մեր բնածին խորամանկութիւնից, և առաւելապէս յատուկ է աւելի պարզամիտ ու մտերիմ բնաւորութեանց։

Սորկի հնազանդութիւնը քննելիս, ես արդէն ասացի, որ հնազանդութիւնն ամենից առաջ պէտք է լինի ներքին և ազատակամ և ամեն տեսակ գործողութիւն, որ առաջացած չէ սիրոյ ազատ դրդումից, Աստուծոյ առաջ կշիռ և նշանակութիւն չունի։ Բայց ահա ինչպիսի եզրակացութիւն անել դրանից, երբ Աստուած հրաւիրում է մեզ ի հնազանդութիւն, մենք սպասում ենք, թէ մի ներքին շարժումն կը մղէ մեզ դէպի այն, և եթէ այդ շարժումն չէ զգացուում մենք հրաժարուում ենք հնազանդելուց։ Իրական հողի վերայ կանգնենք և բացատրենք այն օրինակներով։ Աստուած հրամայում է մեզ աղօթել, բայց մեր սիրտը սառն է, մենք ասում ենք. մեր աղօթքը կը լինի անբովանդակ ձևականութիւն և մենք չենք աղօթում։ Աստուած հրամայում է մեզ կարդալ Նորա խօսքը, բայց մեր սիրտը թարշամած է. Աստուածաշունչը նորա վերայ չէ ազդում և մենք չենք կարդում Ս. Գիրքը։ Աստուած հրամայում է հրապարակաւ խոստովանել մեր հաւատը, բայց մեր սիրտը աստուածային իսկութեան նշանակութիւնը չէ զգում մեր խօսքերն, եթէ մենք վկայելիս լինէինք մեր հաւատի մասին, համապատասխան չէին լինիլ նոյն բոլէին մեր ունեցած զգացմունքին. ուստի և մենք լռում ենք։ Աստուած հրամայում է մեզ այցելել հիւանդներին և աղքատներին, բայց մեր սիրտը երաշտահար է և դամաք, մենք նրանց կը տայինք միայն դատարկ և մաշուած մխիթարական խօսքեր, ուստի և չենք էլ այցելում նրանց։

Եղբարք, ահա այստեղ է վտանգ մեզ համար, որոնք հասկանում ենք, թէ սորկական հնազանդութիւնը գին չունի Աստուծոյ

այքում։ Ես կարող եմ ասել, որ յաճախ խանդով ու եռանդով լի քրիստոնէական կեանքը խորտակուում է այս խութի վերայ։

Ո՛հ, անտարակոյս, մեր սիրտը միշտ սիրով և ուրախութեամբ պիտի կատարէր Աստուծոյ կամքը։ Բայց դուք շատ լաւ գիտէք, որ այդպէս չի լինում միշտ։ Ի՞նչպէս պէտք է վարուել այդպիսի դէպքերում։ Հարկ է անգործունեայ մնալ. Աստուած մի՛ արատցէ։ Հարկ է, եղբարք, հնազանդել, հնազանդել խոնարհութեամբ, հնազանդել, առանց յապիշակութեան, առանց մոլեգին եռանդի, առանց խանդի—բայց և այնպէս հնազանդել։ Ի՞նչպէս, կասէք դուք ինձ, միթէ հնազանդութիւնն առանց եռանդի բոլորովին անօգուտ և մինչև իսկ ծաղրի արժանի չէ։ Ո՛չ, եղբարք, եթէ նա անկեղծ է, անշուշտ ընդունելի կը լինի։ Կամքի այսպիսի ուղղութիւնը, թէև նա չունի ներքին եռանդ, այնու ամենայնիւ մնում է նշան, որ կեանքը դարձած է դէպի Աստուած։

Լինում են օրեր, երբ հոգմի ոչ մի շունչ չէ շարժում նաւի առագաստն և ովկիանոսի մակերևոյթը, այն ժամանակ նաւերը սկսում անշարժ են մնում, բայց նոցա ցուցակի ուղղութիւնից դուք կարող էք գուշակել, թէ նոքա հայրենիք են վերադառնում, թէ նրանից հեռանում են դէպի անյայտ ծովեզրներ։ Այսպէս էլ կեանքի ծովում քրիստոնէի համար լինում են երկարատև օրեր, երբ ոչ մի շունչ ի վերուստ չէ ներշնչում նորա հոգու մէջ, բայց և այնպէս այդ հոգին միշտ ուղղուած պիտի լինի առ Աստուած, որպէս զի հենց առաջին հոգմը տանէր մեզ հնազանդութեան ճանապարհով։ Անմոռութիւն կը լինէր կեանքի զեկավարող կանոն ճանաչել սրտի եռանդուն յապիշակութիւնը, մեր սկզբունքը՝ գաղափարն է—պարտականութիւն, որովհետև սա ամեն ժամանակ գոյութիւն ունի, կայ։ Եւ յիրաւի, այդպիսի մահաբեր կանոնի հետևանքն այն կը լինէր, որ կեանքը փոփոխապէս հերթով կենթարկուէր երբեմն բարոյ և երբեմն չարի թռուցիկ ազդեցութեան, որ նա չէր ունենալ դիմացկունութիւն, ուրեմն և այժու տոկունութիւն, որ մեր բոլոր գործունէութիւնը կը բաժանուէր եռանդի ու վհատութեան շրջանների։ Զորօրինակ այսօր գեղուն է մեր եռանդն և մեր տաճարները լիքն են, նուիրատու-

ութիւնք առատ են, աղքատները սիրելի, իսկ վաղը վհատութեան յուսահատութեան օրը, Աւետարանը մեզ համար—ձայն բարբառոյ յանապատի է, մեր գործերն անկենդան են, մեր աղքատներն արհամարհած։ Անձնախաբ չը լինենք. ամեն ինչ կանոններով պիտի կատարուի։ Քրիստոնէի կեանքը նոյնն է, ինչ որ է վազող ջուրը, փակեցէք սրան նեղ և խորը տաշտի մէջ և նա յառաջ կը մղէ և կեանքն և՝ առատութիւնը, շարժելով ամենածանր մեքենաները, բայց թոյլ տուէք նրան հոսելու փխրուն և աւազոտ գետնի վերայ և նա շուտ կանհետանայ և կամ կը կազմէ մի մահաբեր արտաշնչութիւն ունեցող ճահիճ։

Այսպէս ուրեմն հարկաւոր է հնազանդել ամեն ժամանակ՝ ինչպէս փորձութեան օրը, նոյնպէս երջանկութեան օրը, հարկ է հնազանդել արտասուօք, եթէ դուք չէք այն կատարել ուրախութեամբ, պէտք է հնազանդել տրտում սրտով, եթէ պակաս է եռանդ ու պատրաստականութիւն։ Բացի սրանից ով կարող է երաշխաւորել, որ այդ սկզբում կրաւորական և տրտում հնազանդութիւնն ապագայում Աստուծոյ շնորհիւ չի դառնալ նորա կամքի ուրախ կատարումն։ Եթէ սէրը հնազանդութեան աղբիւր է, չէ՞ կարելի արդեօք ասել, որ հնազանդութիւնն էլ երբեմն կարող է լինել սիրոյ աղբիւր։ Փորձը հաստատում է այս։ Որքան անգամ դուք սկսած էք մի բարի գործ ոչ սիրով, մինչև անգամ գաղտնի զզուանքով և վերջացրած էք այն շնորհակալութեան արտասուքով աչքերումդ։ Որքան անգամ դուք ծունր իջած էք, աղօթքի խօսքերը կրկնելով, բայց ձեր սիրտը անկեղծ արձագանք չէր տալիս նրանց, այդ սիրտը կարծր էր քարի պէս և ահա, կարծես, Մովսէսի գաւազանի հարուածով, դուրս բղխեց նրանից կենդանի ջուր և դուք վեր կացաք չոքած տեղից մխիթարուած աղօթքով։ Ահա հնազանդութեան պտուղներն, ահա ինչ արդեանց է հասնում նա Աստուծոյ օրհնութեամբ։

Էլի մի վերջին խօսք։ Այս խօսքն ես ուղղում եմ նրան, որ չէ ճանաչում ճշմարտութիւնը, այլ միայն որոնում է նրան։ Եթէ ինձ հարցնեն թէ ո՞րն է ամենալաւ միջոցն հաւատ ունենալու կամ նորա հաստատութեան համար, ես առանց տատանման կը պա-

տասխանեմ՝ հնազանդութիւնը։ Լսեցէք պարտականութեան ձայնին և այդ ձայնը, սկզբում ցուրտ և ցամաք, տակաւ առ տակաւ կստանայ քնքոյշ եղ և էջներ ու վերջապէս կը դառնայ կենդանի և դուք նորա մէջ կը ճանաչէք Աստուծոյ ձայնը։

Մի երևելի մատենագիր, սկեպտիկեան դարի թշուառ որդին, այն է Ռուսսօն, դառն փորձով ճանաչում էր գործունէութեան ազդեցութիւնը հաւատի վերայ։ «Եթէ դու ցանկանում ես հաւատալ Աստուծոյ, ասում է նա, ապրիր այնպէս, որ միշտ կարօտութիւն ունենաս նորա գոյութեան»։ Այս խորիմաստ ճշմարիտ միտքը է միայն արձագանք փրկչի խօսքերին. «Ով կամենում է կատարել Աստուծոյ կամքը, կը ճանաչէ, որ իմ վարդապետութիւնս ծագում է Աստուածանից»։

Այսպէս ով տատանուողներ ու երկբայողներ, հնազանդեցէք և դուք կը հաւատաք։ Ամենից առաջ հնազանդեցէք Աւետարանի բարոյական վարդապետութեան, որոյ սրբութեան վկայում է ձեր խիղճը և դուք կը հաւատաք Քրիստոսին։ Հնազանդեցէք ճշմարտութեան և սա կը լուսաւորէ ձեզ։ Առանց սորա դուք իզուր կը խորհէք ու կը դատէք, անդադար ճշմարտութիւն որոնելով և նրան չը գտնելով՝ ի զուր կը կշռէք ձեր մտքի ու հանճարի կշիռքով միմեանց հակառակ պատճառներ ու հիմունքներ։ Միայն այն ժամանակ կշիռքի մի թաթը կը հակուի դրական հաւատի կողմն, երբ նորա մէջ կը գտնէք ձեր հնազանդութիւնը։ Ապրեցէք ուրեմն այնպէս, որ ձեզ հարկաւոր լինի հաւատը նորա համար, թէ արդարացումը, սրբութիւնն և սէրը Աստուծոյ—իսկութիւն են և դուք կը հաւատաք։ Որքան աւելի զոհ բերէք ճշմարտութեան, այնքան նա աւելի թանգ կը լինի ձեզ։ Հրաժարուեցէք նորա համար խաբուսիկ ունայնութեան սնոտի փայլից և ձեր պարզուած աչքերը ուրախութեամբ կը տեսնեն նորա պայծառ փայլը։ Հրաժարուեցէք նորա համար մարմնաւոր կոպիտ զուարճութիւններից, հպարտութեան վատ ուրախութիւններից, անձնասիրութեան գայթակղիչ ցնորքներից և դուք նորա մէջ կը գտնէք ձեր վարձն ու տրիտուրն, որոյ մասին դուք կարծիք անգամ չէիք տանում։ Ո՛վ, աստուածային ճշմարտութիւն, Դու

ծածկու�մեն հպարտ բանականութիւնից, որովհետև սա քո մէջ որոնում է միայն իւր հեռաքրքրութեան համար կերակուր, դու նորա համար մնում ես անթափանցելի գաղտնիք։ Իսկ նոցա, որք կամենում են լսել քո ձայնդ, որան հեռևելու համար, նոցա, որք քեզ կոչում են հնազանդելու համար, դու յայտնում ես, և այդպիսեաց համար դառնում ես աւելի և աւելի մեծ, գեղեցիկ, երկրպագութեան արժանի և քո պահանջած բոլոր զոհերն ալինչ են դառնում այն մաքուր, խորին ու անսահման երջանկութեան առաջ, որով լցնում ես դու սրտերը։

(Բերսիէ)։ Պ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԱՒՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆ ԵՒ ՊԱՏԻԺ [1]։

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺ։

Հասարակական բարոյականութեան համար էական նշանակութիւն ունի էրա-ոնց պաշպանո-նէ-նը կամ արդարութեան պահպանումն պետութեան կողմից։ Իրաւանց կարգը հասարակութեան բարոյական կեանքի հիմն է, նոյնպէս և նորա արտաքին դիմադրութեան ոյժն, ուր այս հիմքը խախտուած է, զորօրինակ ուր ազգը կորցրել է իւր վստահութիւնն գէպի դատական հաստատութիւնը, այդ նշան է հասարակական բարոյականութեան թուլանալուն (ժողովրդի բարոյական գիտակցութեան թուլանալը)։ Որովհետև իրաւանց պահպանութիւնը նշանակութիւն ունի ոչ միայն առանձին անձնաւորութեան համար, այլ և բոլոր քաղաքական հասարակութեան համար։ Այս հիման վերայ իրաց կարգն անսպասման կերպով պէտք է պահպանուի ու պաշտպանուի ամեն տեսակ կամայականութեան և ինքնիշխանութեան դէմ։ Պատժական իրաւանց պահպանութեան մէջ երևում է, թէ պետութիւնն որքան լրջութեամբ վերաբերուում է գէպի իրաւունքն ու արդարութիւնը։ Քրէական պատժական օրէնսդրութիւնը մի ազգի մէջ, նորա ընդունելութիւնն և յարգանքը գէպի նա, ապացոյց և արտայայտիչ է ազգի իրաւաբանական գիտակցութեան, ընդ նմին և նորա բարոյական գիտակցութեան օրէնքի հեղինակութեան, պարտաւորութեան

1) Տես «Արարատ» 1891 թ. Նոյեմբեր 531 եր.